# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

# ՀՐԱՄԱՆ

Թիվ 8-Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ԹԻՎ 12-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2019 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» թիվ 12-Լ հրամանով (այսուհետ՝ հրաման) հաստատված հավելվածի՝

2.2 ենթախումբը լրացնել նոր 31-րդ կետով.

«31. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչության սոցիալական ապահովման և կենսաթոշակների նշանակման բաժնի պետ-վարչության պետի տեղակալ (ծածկագիր՝ 03-Հ-2.2-31):»

2. Ուժը կորցրած ճանաչել հրամանով հաստատված հավելվածի 2.2 ենթախմբի 2-րդ և 24-րդ կետերը:

3. Հրամանը հայտարարել ՀՀ ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին և քաղաքացիական հատուկ ծառայության ծառայողներին:

**ԳՆԴԱՊԵՏ** **Վ. ՂԱԶԱՐՅԱՆ**

«17» 02 2021թ.

ք. Երևան